Խլիսուն, ինչ լիւս [1]) բացուաւ, էլան ի՞նչ տեսան,— տեսան Թագաւորի աղջկան յերդանիր բացուի, լիւս տուիր ի քեաղաք։

Թագաւորից ֆարման [2]) էլաւ. «Կան էկէք, տեսնամ ի՞նչըխ մարդ ի էկի իմ աղջկան խնձիւր կուտրի, տարի, բռնեցէք, բիրէք էստի, էնի ջալլադ էնինք [3])»։

Զաւուշնիր ընկան քեաղքի մէջ կան կեալու. էրկու սհաթ կան էկան, մարդ չտեսան։ Գնացին, ինկեան էն խալուիրու խան, ըսին. «Խալուիւր ջան, ըստի [4]) կարիբ մարդ չ'կա՞յ»։

Ասաց. «Զէ (էն տղէն էնքան էն խալուիրոջ աչքին չէր ի կեայ), ըսաց՝ չէ, կարիբ մարդ չ'կայ»։

Տղէն վիրուց ըսաց. «Ախպէր ջան, ինչի՞ կարիբ մարդ չ'կայ ես կարիբ եմ»։

Խալուիւր ըռըկաւ. «Սիւս կաց, ղքի կ'տանին, սպանին»։

Ըսաց. «Ինչի՞»։

Էդ չաւուշներուն կանչից. «Ախպէրնիր, ի՞նչ խարցմունս կ'անէք, ես կարիբ իմ»։

Զաւուշնիր տեսան էդ տղան էնէնց մէվջըւան ջահէլ տղայ մ'է, էնոնց արուն էռաց էդ տղի վրայ։ Զաւուշնիր ասըցին. «Ա՜յ տղայ, ղքի պահինք, տիւ մի կեայ Թագաւորի յառաջ, դիւ ափսոս իս»։

Թ'ասաց. «Թագաւորին ի՞նչ ըլի՝ չ'կեամ Թագաւորու յառաջ»։

Զաւուշնիր ասըցին. «Ո'րտի, ասըցին, զարկած ին Թագաւորի աղջկան խնձիւր տարած ին, Թագաւորից հրաման ի, ինչ մարդու մօտ էն խնձիւր տեսան, թէ կտրիճ էլաւ, կռիւ արից, պրծաւ, թէ որ կտրիճ չ'էլաւ, ղգլեոխ կ'զարկին»։

Էդ էլ ձեռ տարաւ ջէբ, մէկ լըփ [5]) ոսկի խանից, տուից զաւուշնիրուն, մէկ էլ ձեռ տարաւ ծիւց, ըզ ոսկի խնձիւր խանից, շանց տուից, ասաց. «Ա'խպիրնիր, էնքան ձի ժամանակ տուէք, ես

---

[1]) Լոյս։ [2]) Հրովարտակ, հրաման։ [3]) Գլխատենք։ [4]) Այստեղ։ [5]) Բուռ։